ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2011թվականի № 30-Ն

2012Թ.-Ի ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԾԻԾԵՌՆԱԿ »ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի և «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

Կողմ (6)		Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Արարատ	Ալեքսանյան		
Սերգեյ	Գևորգյան		
Տիգրան	Եսայան		
Սողոմոն	Խաչատուրյան		
Տիգրան	Մարտիրոսյան		
Էդիկ	Եսաղդալյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՂԱԶԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 1

Խաչփար գյուղական համայնքի ավագանու

2011 թվականի **դեկտեմբերի** 9-ի N 30-Ն որոշման

ԽԱՉՓԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)*
Համայնքի ղեկավար		*110000*
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	*80000*
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2/	1	*80000*
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3/	1	*78000*
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/	1	*65000*
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2/	1	*62000*
Աշխատակազմի **երկրորդ** կարգի մասնագետ /3.3/	1	*60000*
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Մշակույթի տան տնօրեն	*1*	*40000*
Գրադարանավար	*1*	*32500*
ՏԵԽՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Հավաքարար	1	***32500***
Պահակ	**1**	***32500***

Հավելված 2

Խաչփար գյուղական համայնքի ավագանու

2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 30-Ն որոշման

ԽԱՉՓԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԻԾԵՌՆԱԿ»ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 6

2.ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)*
Տնօրեն	1	70000
Դաստիարակ	1	65000
Հաշվապահ	0.5	35000
Երաժշտության դաստիարակ	0.25	32500
Խոհարար	1	32500
Դայակ	1	32500

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2011թվականի № 29-Ն

2012Թ.-Ի ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջով՝ ավագանին որոշում է.

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2012թ.-ի համար սահմանել հարյուր տասը հազար դրամ:

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Արարատ Ալեքսանյան

Սերգեյ Գևորգյան

Տիգրան Եսայան

Սողոմոն Խաչատուրյան

Տիգրան Մարտիրոսյան

Էդիկ Նադդալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՂԱԶԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2011թվականի № 28-Ն

«ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2012Թ.-ԻՆ ԳԱՆՁՎՈՂ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջով՝ ավագանին որոշում է.

«ՀՀ Արարատի մարզի Խաչփար համայնքի«Ծիծեռնակ»մսուր-մանկապարտեզ»համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2012թ.-ին գանձվող ծնողական վճարների դրույքաչափը սահմանել յուրաքանչյուր երեխայի համար ամսական հինգ հազար դրամ:

Կողմ (6)		Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Արարատ	Ալեքսանյան		
Սերգեյ	Գևորգյան		
Տիգրան	Եսայան		
Սողոմոն	Խաչատուրյան		
Տիգրան	Մարտիրոսյան		
Էդիկ	Նադդալյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՂԱԶԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2011թվականի № 27-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝երեսուն հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթանասուն հազար դրամ:

3)ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար դրամ,
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառական նշանակության փոփոխություն՝երեք հազար դրամ.
2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «1» կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «1» կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հինգ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել.
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ վեց հազար դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար վեց հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.
2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի

թույլտվության համար տեղական տուրքը 2012թ. համար սահմանել հարյուր հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը 2012թ. համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00–ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը 2012թ. համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ յոթանասուն հազար դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր հազար դրամ,

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝մեկ հազար դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ,

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը 2012թ. համար սահմանել երկու հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը 2012թ. համար սահմանել հինգ հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել երկու հազար դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել մեկ հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝մասնակիցներից վճար գանձել մեկ հազար դրամ:

14. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլատրման վճարը սահմանել՝ երկու հազար դրամ:

15. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ:

16. Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:

17. 2012թ.-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:

18. Տեղական տուրքերը և վճարները ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դնել հաշվետար – գանձապահի վրա:

19. Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Կողմ (6)		Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Արարատ	Ալեքսանյան		
Սերգեյ	Գևորգյան		
Տիգրան	Եսայան		
Սողոմոն	Խաչատուրյան		
Տիգրան	Մարտիրոսյան		
Էդիկ	Նաղդալյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՂԱԶԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2011թվականի № 26

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի №9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի 2011թվականի դեկտեմբերի 9-ի № 9 հերթական նիստի օրակարգը.

18. Համայնքի տարածքում 2012 թ.համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

19. «ՀՀ Արարատի մարզի Խաչփար համայնքի «Ծիծեռնակ» մսուր – մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայություն-ների դիմաց 2012թ.-ին գանձվող ծնողական վճարների դրույքաչափ սահմանելու մասին

20. 2012թ. համար համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին

21.2012 թ. համար համայնքի ղեկավարի աշխատակազմի և ««Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Արարատ Ալեքսանյան

Սերգեյ Գևորգյան

Տիգրան Եսայան

Սողոմոն Խաչատուրյան

Տիգրան Մարտիրոսյան

Էդիկ Նաղդալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ